



Legislation update

Summary of the selected documents published for the period from 1 April 2016 to 30 June 2016

Tax

Issue 3, 2016

A Bibliography of New Legislation, Instructions and Documents, with Commentary

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Անվանումը **ՀՀ կառավարության 2009թ. մարտի 12-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը. 6 ապրիլի 2016թ.
Համարը. 352-Ն
Հրատարակում. ՊՏ No. 33, 20 ապրիլի 2016թ.
Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2009թ. մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» N 268-Ն որոշման մեջ, որի արդյունքում, այն ֆիզիկական անձինք, ովքեր ունեն օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի արտոնություն, ազատվում են այդ արտոնության ստացման համար արտոնությունը հաստատող փաստաթղթի լուսապատճենի տրամադրման պահանջից:

Հիշեցնենք, որ ներկայումս օրենքով սահմանված կարգով արտոնություն ունեցողները ոչ միայն պարտավոր էին ներկայացնել արտոնությունները հավաստող փաստաթղթերը, այլև տրամադրել լուսապատճենը: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2009թ. մարտի 12-ի N 268-Ն որոշման համաձայն, պետական տուրք վճարողները պարտավոր են ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրենց վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը (որոշման համաձայն՝ մինչև 12 տարեկան երեխաների համար արտոնությունները հաստատող փաստաթուղթ է հանդիսանում երեխայի անձնագիրը, իսկ այն օտարերկրյա պետությունների քաղաքացիների համար, որոնց երեխաների տվյալները ներառվում են ծնողի անձնագրի մեջ՝ ծնողի անձնագիրը):

GENERAL LEGISLATION

1. Title **On making an amendment to the RA government decree No. 268-N dated 12 March 2009**

Document: RA government decree
Date: 6 April 2016
Number: 352-N
Publication: OJ No. 33, 20 April 2016
Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this RA government decree an amendment has been made to the RA government decree No. 268-N of 12 March 2009 "On approval of a procedure for delegation to organizations the collection of the state duty for departure of individuals from the Republic of Armenia by air transport", as a result of which the individuals who have privilege with respect to the state duty for departure by air transport are released from the requirement to submit a photocopy of a document evidencing that privilege in order to receive such a privilege.

It should be reminded that at present, individuals who have been granted with the privilege in accordance with the procedure prescribed by the law shall submit both documents evidencing their privileges and their photocopies. At the same time, in accordance with the RA government decree No. 268-N of 12 March 2009 state duty payers shall submit documents evidencing the privileges granted to them with respect to the state duty (based on the decree: for children under 12 passport shall be considered as a document evidencing the privilege and for foreign citizens information about whose children is included in the parent's passport, the latter shall be considered as a document evidencing the privilege).

2. Անվանումը **ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 1048-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. 490-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 40, 25 մայիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի «ՀՀ-ում հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» N 1048-Ն որոշման մեջ:

Կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ հաշվապահի որակավորման վկայական տրամադրվում է առանց քննություն հանձնելու հետևյալ դեպքերում՝

- Էյ-Սի-Սի-Էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակների կամ Սի-Էֆ-Էյ (CFA) որակավորման երկրորդ մակարդակի կամ Սի-Փի-Էյ (CPA) որակավորման չորրորդ մակարդակի հավաստագիր ունենալու դեպքում,
- Նախկինում քննության միջոցով որակավորման վկայական ստացած անձանց՝ վկայականի գործողության ժամկետը լրանալու դեպքում երբ առկա է մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցած լինելու փաստը:

Միաժամանակ, սահմանվել է հաշվապահի որակավորման վկայական ստանալու համար տրվող դիմումի ձևը, ինչպես նաև նախատեսվել է դիմումները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորությունը:

3. Անվանումը **«Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին»**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. 493-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 40, 25 մայիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Այս որոշմամբ սահմանվել է օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրման ընթացակարգը, սահմանվել են գործատուի կողմից ներկայացվող

2. Title **On making amendments and supplements to the RA government decree No. 1048-N dated 8 August 2003**

Document: RA government decree
 Date: 12 May 2016
 Number: 490-N
 Publication: OJ No. 40, 25 May 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this RA government decree amendments have been made to the RA government decree No. 1048-N of 8 August 2003 “On approval of a procedure of qualification of accountants in the Republic of Armenia”.

As a result of the amendments made it has been established that without passing exams the accountant qualification certificate can be issued in the following cases:

- if a certificate for F1-F9 levels of ACCA qualification or second level of CFA qualification or forth level of CPA qualification is available,
- expiration of the qualification certificate received previously by individuals by taking exams in case of existence of facts of their attendance of professional trainings.

At the same time the form of an application to be submitted for the receipt of the accountant qualification certificate has been established, and the possibility of electronic submission of the applications has been provided for.

3. Title **On establishment of a procedure and timeframes of granting and denying a work permit to an employer for an expatriate, procedure on reimbursement of expenses by an employer in case of failing to provide an expatriate with an appropriate job and their amounts, list of documents necessary for issuing a work permit to an employer for an expatriate and the list of professions giving right to highly qualified foreign specialists to work in the Republic of Armenia without work permit**

Document: RA government decree
 Date: 12 May 2016
 Number: 493-N
 Publication: OJ No. 40, 25 May 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this decree a procedure of granting a work permit to an employer for an expatriate and the list of documents to be submitted by the employer and the list of professions giving right to work in the Republic of Armenia without work permit have



անհրաժեշտ փաստաթղթերի և առանց աշխատանքի թույլտվության ՀՀ-ում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը: Ամբողջականացվել են նաև գործատուի կողմից ՀՀ օրինական մուտք գործած և աշխատանքի թույլտվություն ստացած օտարերկրացի աշխատողի և նրա ընտանիքի անդամների հետ վերադարձի հետ կապված ծախսերի փոխհատուցման պայմանները և չափերը՝ գործատուի կողմից օտարերկրյա աշխատողին համապատասխան աշխատանքով չապահովելու դեպքում:

*Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության ս.թ. օգոստոսի 11-ի թիվ 827-Ն որոշմամբ «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին» N 493-Ն որոշման **գործողությունը կասեցվել է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը:***

Հիշեցնենք, որ մինչև ՀՀ կառավարության այս որոշման ընդունումը «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատանքի թույլտվությունը փաստացի չէր տրամադրվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան ընթացակարգերը սահմանված չէին:

been established. Also have been finalized the conditions of reimbursement by an employer of expenses and their amounts, incurred if an expatriate legally entered the RA and granted a work permit and his/her family members leave the RA due to the employer of not being able to provide the expatriate with an appropriate job.

*It should be reminded that in accordance with the RA government decree No: 827-N of 11 August 2016 the effect of the decree “On establishment of a procedure and timeframes of granting and denying a work permit to an employer for an expatriate, procedure on reimbursement of expenses by an employer in case of failing to provide an expatriate with an appropriate job and their amounts, list of documents necessary for issuing a work permit to an employer for an expatriate and the list of professions giving right to highly qualified foreign specialists to work in the Republic of Armenia without work permit” **has been suspended till 1 January 2018.***

It should be reminded that prior to adoption of this RA government decree a work permit defined by the RA Law “On Foreigners” has not been actually granted due to the fact that the appropriate procedures have not been established.

ՀԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

TAXES AND OTHER MANDATORY PAYMENTS

1. Անվանումը **ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի N 691 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 31 մարտի 2016թ.
 Համարը. 315-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 27, 6 ապրիլի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 31-ի «Հարկերի և սոցիալական վճարների վճարումն ուշացնելու դեպքում լիազոր մարմինների կողմից դրանց վճարման համար օրենքով սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու վերաբերյալ դատարանի հայցադիմումներ ներկայացնելու բացառությունների դեպքերը սահմանելու մասին» N 691 որոշումը՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» եւ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունները:

2. Անվանումը **ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 5-ի N 968-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 28 ապրիլի 2016թ.
 Համարը. 413-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 35, 28 ապրիլի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է մտնում 2016թ. մայիսի 1-ից:

Համառոտ նկարագիրը.

Այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 5-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու պարտադիր ժամկետները սահմանելու մասին» N 968-Ն որոշման մեջ:

Այս փոփոխությամբ 2013թ. կամ 2014թ. կամ 2015թ. արդյունքներով մինչև 10.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար հանվել է օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու պարտադիր պահանջը:

Միաժամանակ, 2014թ. արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ կամ 2015թ. արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 115.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար վերոնշյալ պահանջը հետաձգվել է մինչև 2017թ. հունվարի 1-ը:

Հիշեցնենք, որ նշված հարկ վճարողները տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին պարտավոր էին ներկայացնել 2016թ. մայիսի 1-ից.

1. Title **On repealing the RA government decree No. 691 dated 31 July 2001**

Document: RA government decree
 Date: 31 March 2016
 Number: 315-N
 Publication: OJ No. 27, 6 April 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this RA government decree the RA government decree No. 691 of 31 July 2001 “On establishment of exceptions for submission of claims to court by the authorities for acknowledgment of a taxpayer insolvent in case of delaying with payment of taxes and social payments during 183 days from the payment deadline as prescribed by the law” has been repealed taking into account relevant changes made in RA Laws “On taxes” and “On Funded Pensions”.

2. Title **On making amendments to the RA government decree No. 968-N dated 5 September 2013**

Document: RA government decree
 Date: 28 April 2016
 Number: 413-N
 Publication: OJ No. 35, 28 April 2016
 Effective: From 1 May 2016

Abstract:

By this decree an amendment has been made to the RA government decree No. 968-N of 5 September 2013 “On establishing mandatory deadlines for submission to the tax authorities by means of network communication of information on total amount of cash settlements made during the day through cash registers”.

By this amendment the mandatory requirement to send to the tax authorities by means of network communication the information on total amount of cash settlements made during the day through cash registers has been withdrawn for the taxpayers with sales revenue of up to AMD 10.0 million based on the results of 2013 or 2014 or 2015.

At the same time for the taxpayers with sales revenue of AMD 10.0 million to AMD 58.35 million based on 2014 results or AMD 10.0 million to AMD 115.0 million based on 2015 results the fulfillment of the above requirement has been postponed till 1 January 2017.

It should be reminded that the aforementioned taxpayers should submit the information to the tax authorities by means of network communication from 1 May 2016.

3. Անվանումը **ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի N 846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 28 ապրիլի 2016թ.
 Համարը. 415-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 35, 28 ապրիլի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է ստնում 2016թ. մայիսի 1-ից:

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 26-ի No. 1325-Ն ու 2005թ. հունիսի 1-ի N 946-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 846 որոշման մեջ:

Մասնավորապես սահմանվել է, որ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N875-Ն հրամանով հաստատված՝ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) 4 նիշը կիրառվում է միայն ծառայությունների անվանումների մասով, իսկ ապրանքների համար կիրառվում է ԱՏԳ ԱԱ դասակարգչի 4 նիշը: **(Ապրանքների համար ԱՏԳ ԱԱ դասակարգչի 4 նիշը կիրառելու պարտավորությունը ուժի մեջ է մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից):**

Հիշեցնենք, որ մինչև վերոնշյալ փոփոխությունը և ծառայությունների, և ապրանքների մասով կիրառվում էր արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգիչը:

Միաժամանակ, նախորդ տարվա արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար հանվել է ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) առնվազն 2-րդ աստիճանին համապատասխան լրացման պահանջը:

4. Անվանումը **ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 4-ի N 980-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 28 ապրիլի 2016թ.
 Համարը. 429-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 37, 11 մայիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է ստնում 2018 թ. հունվարի 1-ից:

Համառոտ նկարագիրը.

Այս որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 4-ի «Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման կարգը սահմանելու մասին» թիվ 980-Ն որոշումը, որի արդյունքում օրենքով սահմանված

3. Title **On making amendments and supplements to the RA government decree No: 846-N dated 1 August 2013**

Document: RA government decree
 Date: 28 April 2016
 Number: 415-N
 Publication: OJ No. 35, 28 April 2016
 Effective: From 1 May 2016

Abstract:

By this RA government decree a number of amendments and supplements have been made to the RA government decree No.846-N of 1 August 2013 “On approval of the requirements set for cash registers and their application procedure and on repealing the RA government decrees No.1325-N of 26 August 2004 and No. 946-N of 1 June 2005”.

Particularly, it has been established that for the taxpayers with sales revenue of AMD 58.35 million and above based on previous year’s results who use cash registers that allow to submit to the tax authorities by means of network communication the information on total amount of cash settlements made during the day through cash registers, 4 digit of classifier of classification of products by activity (CPA) approved by the order No.875-N of the RA Minister of Economy of 19 September 2013 shall be applied only for the names of services, and for the goods 4 digit of HCDCS Code shall be applied. **(The requirement to use 4 digit of HCDCS Code for goods came into force from 1 August 2016).**

It should be reminded that before the above-mentioned change the classifier of classification of products by activity was applied for both services and goods.

At the same time for the taxpayers with sales revenue of AMD 10.0 million to AMD 58.35 million based on previous year’s results the requirement to complete names (types) of goods (services) in cash register receipts in line with at least 2nd level of classifier of classification of products by activity (CPA) has been withdrawn.

4. Title **On repealing the RA government decree No. 980-N dated 4 September 2014**

Document: RA government decree
 Date: 28 April 2016
 Number: 429-N
 Publication: OJ No. 37, 11 May 2016
 Effective: From 1 January 2018

Abstract:

This decree has repealed the RA government decree No.980-N of 4 September 2014 “On procedure of calculation and settlement of liabilities with respect to stamps of the being goods out of use and written off according to the prescribed procedure”, as a result of which, in accordance with the provisions of the law liabilities will not be calculated for stamps

դրույթներին համապատասխան պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների դրոշմապիտակների գծով պարտավորություններ չեն հաշվարկվի:

Վերոնշյալ փոփոխությունը կատարվել է հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրոշմապիտակները 2018թ. հունվարի 1-ից պետք է տրամադրվեն անվճար:

5. Անվանումը «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 25 ապրիլի 2016թ.
 Համարը. ՀՕ-46-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 38, 18 մայիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Համառոտ նկարագիրը.

Կատարված լրացման արդյունքում սահմանվել է, որ դրամարկղային գրքերը կարող են վարվել նաև էլեկտրոնային եղանակով:

Հիշեցնենք, որ ներկայումս դրամարկղային գրքերը վարվում են միայն թղթային եղանակով:

6. Անվանումը «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-67-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 44, 8 հունիսի 2016թ..
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում 2015թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս լրացմամբ սահմանվել է ինքնավար էներգատրտադրողի և էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի միջև փոխհոսքերի կարգը:

Միաժամանակ, հաշվի առնելով էներգետիկայի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ ինքնավար էներգատրտադրողների համար նախատեսված կարգավորման առանձնահատկությունները համապատասխան փոփոխություններ են կատարվել «Հարկերի մասին», «Եկամտային հարկի մասին», ինչպես նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներում: Մասնավորապես՝

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ Հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների սեփական կարիքների բավարարման համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող՝ ֆիզիկական անձ ինքնավար էներգատրտադրողների արտադրած էլեկտրական էներգիայի հանձնումն էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին, այդ

of the goods being out of use and written off by the prescribed procedure.

The aforementioned amendment has been made considering the fact that starting from 1 January 2018 the stamps must be provided free of charge,

5. Title On making a supplement to the RA Law “On Cash Desk Operations”

Document: RA law
 Date: 25 April 2016
 Number: HO-46-N
 Publication: OJ No. 38, 18 May 2016
 Effective: From the 6th month following the official publication

Abstract:

As a result of this supplement it has been established that cash books can be maintained electronically as well.

It should be reminded that currently cash books are maintained only in hard copy.

6. Title On making supplements and amendments to the RA Law “On Energy Saving and Renewable Energy”

Document: RA law
 Date: 12 May 2016
 Number: HO-67-N
 Publication: OJ No. 44, 8 June 2016
 Effective: From the 10th day following the official publication and is effective for the relations occurred from 1 January 2015

Abstract:

By this supplement to the law a procedure on counter flow of energy between an autonomous energy producer and an entity possessing energy distribution license has been established.

At the same time, considering regulation peculiarities prescribed for the autonomous energy producers by the legislation regulating energy sphere, appropriate amendments have been made to the RA Law “On Taxes”, RA Law “On Income Tax” as well as RA Law “On Profit Tax”. Particularly:

1. By the RA Law on making a supplement to the RA Law “On Taxes” it has been established that in terms of application of tax legislation a transmission to the entity possessing energy distribution license of energy produced for personal needs of citizens by the individual autonomous energy producer who uses renewable energy resources and is not a sole entrepreneur, shall not be treated as an entrepreneurship activity, including considerations received for this energy, in case the total output capacity of their energy producing systems does not exceed the total capacity of their placed energy consumers, being, however, not more than 150 kW.

թվում՝ դրա դիմաց ստացվող հատուցումները, եթե էլեկտրական էներգիա արտադրող իրենց տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում էլեկտրական էներգիայի տեղակայված իրենց սպառիչների ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կիլովատը:

2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենում լրացում կատարելու մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքներով սահմանվել է, որ շահութահարկով և եկամտային հարկի հարկման նպատակով եկամուտ, ինչպես նաև ծախս չեն համարվում վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողների կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները:

2. By the RA Laws on making supplements to the RA Law “On Income Tax” and RA Law “On Profit Tax” it has been established that considerations received by the autonomous energy producers using renewable energy resources from the entity possessing energy distribution license, as well as considerations in form of energy received for the energy supplied by the autonomous energy producers to the entity possessing energy distribution license in case of equal counter flows shall not be treated as income and expenses for profit tax and income tax purposes.

7. Անվանումը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-72-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 44, 8 հունիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

7. Title On making amendments to the RA Law “On Nature Protection and Nature Utilization Payments”

Document: RA law
 Date: 12 May 2016
 Number: HO-72-N
 Publication: OJ No. 44, 8 June 2016
 Effective: From the 10th day following the official publication

Համառոտ նկարագիրը.

Կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ ԵՏՄ անդամ հանդիսացող պետություններից ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկում է ներմուծողը՝ այդ ապրանքների համար «Անուղղակի հարկերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի) հիման վրա (վճարի հաշվարկման բազա), արտացոլելով նույն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում հարկային մարմին ներկայացվող ներմուծման հարկային հայտարարագրում, որոնք պետական բյուջե են վճարվում մինչև այդ ապրանքները ներմուծելու օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Abstract:

As a result of amendments made it was established, that the payment for goods harmful for the environment imported to the RA from member states of EAEU shall be calculated by the importer based on the VAT taxable base (excluding excise tax calculated for these goods by the procedure stipulated by the law) determined according to the procedure prescribed by the RA Law “On Peculiarities of Calculation and Payment of Indirect Taxes” (payment calculation base) and shall be reflected in the import tax declaration submitted to the tax authorities within timeframes and according to the procedure established by the same law. This payment shall be made to the state budget by the 20th (inclusive) of the month following the month that includes import date of these goods.

At the same time it has been established that the payment for goods harmful for the environment imported to the RA from non-member states of EAEU under the customs procedure “release for domestic consumption” shall be calculated based on the customs value of these goods and paid to the state budget at the moment of import in accordance with the procedure prescribed by the RA government and by submitting to the appropriate custom authorities documents supporting the payment.

Միաժամանակ, սահմանվել է, որ ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ «բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա եւ պետական բյուջե է վճարվում ներմուծելիս՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, վճարումը հաստատող փաստաթուղթը ներկայացնելով համապատասխան մաքսային մարմին:

It should be reminded that in accordance with the RA Law on Customs Regulation, goods of the EAEU cross the RA border (import or export) under customs procedure “customs transit” and declaration of customs value is not required by this procedure.

Հիշեցնենք, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Միության ապրանքները ՀՀ սահմանով տեղա-



փոխվում են (ներմուծվում կամ արտահանվում են) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, իսկ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի շրջանակներում մաքսային արժեքի հայտարարագրում չի իրականացվում:

8. Անվանումը «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-73-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 44, 8 հունիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Սահմանվել է, որ ԵՏՄ-ից ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի դրույքաչափը հաշվարկվում է այդ ապրանքների համար «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով որոշվող ավելացված արժեքի հարկով հարկման բազայի (առանց այդ ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարի)՝ վճարի հաշվարկման բազայի նկատմամբ:

8. Title On making a supplement to the RA Law “On Nature Protection Payment Rates”

Document: RA law
 Date: 12 May 2016
 Number: HO-73-N
 Publication: OJ No. 44, 8 June 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

It was established that the payment rate for the goods harmful for environment imported to the RA from EAEU shall be calculated based on the VAT taxable base (excluding excise tax calculated for these goods by the procedure stipulated by the law) determined for these goods by the procedure prescribed by the RA Law “On Peculiarities of Calculation and Payment of Indirect Taxes between the Republic of Armenia and members states of the Eurasian Economic Union”, which is treated as a basis for calculation of the payment.

9. Անվանումը «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-76-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 44, 8 հունիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Կատարված փոփոխությամբ երկարաձգվել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական վճար կատարելու պարտադիր ժամկետը մինչև 2018թ. հունիսի 1-ը:

9. Title On making amendments to the RA Law “On Funded Pensions”

Document: RA law
 Date: 12 May 2016
 Number: HO-76-N
 Publication: OJ No. 44, 8 June 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this amendment the mandatory deadline for payment of the social payment specified by the RA Law “On Funded Pensions” has been extended to 1 July 2018.

Հիշեցնենք, որ սոցիալական վճար կատարելու պարտադիր ժամկետ էր սահմանված 2017թ. հունիսի 1-ը:

It should be reminded that previously the mandatory deadline for payment of the social payment was defined 1 July 2017.

10. Անվանումը «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 12 մայիսի 2016թ.
 Համարը. ՀՕ-77-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 44, 8 հունիսի 2016թ.
 Ուժի մեջ է. Ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

Համառոտ նկարագիրը.

Օրենքի փոփոխությամբ սահմանվել է, որ 2017թ. հունվարի 1-ից հետո բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողներ եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր և հարկային մարմիններ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

10. Title On making supplements to the RA Law “On Nature Protection and Nature Utilization Payments”

Document: RA law
 Date: 12 May 2016
 Number: HO-77-N
 Publication: OJ No. 44, 8 June 2016
 Effective: From 1 January 2017

Abstract:

In accordance with the amendment to the law it has been established that starting 1 January 2017 the payers of nature protection and nature utilization payments can submit quarterly calculations-reports to the appropriate authorities and tax authorities also electronically by the 20th (inclusive) of the month following the quarter.

Նշենք, որ հաշվարկ-հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը սահմանելու է ՀՀ կառավարությունը:

It should be stated that the procedure of submission of calculations-reports in electronic form shall be established by the RA government.

Միաժամանակ, սահմանվել է, որ 2017թ. հունվարի 1-ից հետո նյալթիների հաշվարկ-հաշվետվությունները, ինչպես նաև ռոյալթիի հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման ժամկետից հետո կնքված կամ հարկային մարմին ներկայացրած պայմանագրերի փոփոխությունների դեպքերում դրանց պատճենները, ինչպես նաև կնքված պայմանագրերը լուծվելու դեպքում դրանց վերաբերյալ տեղեկությունները լիազոր մարմին են ներկայացվում **բացառապես էլեկտրոնային եղանակով**:

At the same time it has been established that starting 1 January 2017 calculations-reports of royalty, as well as copies of amendments in case of amendments to the agreements presented to the tax authorities or signed after the date of submission of royalty calculations-reports, as well as information about terminated agreements shall be submitted to the authorities **only in electronic form**.

11. Անվանումը **ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. դեկտեմբերի 29-ի N 965-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին**

11. Title **On making amendments to the order No.965-N of the RA Minister of Finance dated 29 December 2014**

Փաստաթուղթ. Հրաման
 Ամսաթիվը. 15 փետրվարի 2016թ.
 Համարը. 81-Ն
 Հրապարակում. ԳՏ No. 6, 15 մարտի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2016թ. ապրիլի 1-ից հետո կատարվող արտահանման և ներմուծման գործարքների վրա

Document: Order
 Date: 15 February 2016
 Number: 81-N
 Publication: DJ No. 6, 15 March 2016
 Effective: From the 10th day following the official publication and is effective for the importation and exportation carried from 1 April 2016

Համառոտ նկարագիրը.

Abstract:

Այս հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. դեկտեմբերի 29-ի «Արտահանման և ներմուծման հարկային հայտարարագրի ձևերը հաստատելու մասին» N 965-Ն հրամանում, որի արդյունքում փոփոխվել են ներմուծման և արտահանման հայտարարագրերի նոր ձևեր:

In accordance with the above stated order of the RA Minister of Finance amendments have been made to the order of the RA Minister of Finance No.965-N of 29 December 2014 on approval of forms of tax declaration for export and import as a result of which new forms of import and export declarations have been changed.

12. Անվանումը **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011թ. օգոստոսի 16-ի N 2034-Ն հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

12. Title **On making amendments and supplements to the order No.2034-N of the Chairman of the State Revenue Committee to the RA government dated 16 August 2011**

Փաստաթուղթ. Հրաման
 Ամսաթիվը. 27 ապրիլի 2016թ.
 Համարը. 30-Ն
 Հրապարակում. ԳՏ No. 11, 20 մայիսի 2016թ..
 2016թ. հուլիսի 1-ից և տարածվում է 2016թ. հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների նկատմամբ

Document: Order
 Date: 27 April 2016
 Number: 30-N
 Publication: DJ No. 11, 20 May 2016
 Effective: From 1 July 2016 and is effective for the reporting periods after 1 July 2016

Համառոտ նկարագիրը.

Abstract:

Այս հրամանով փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿՄ ՊԵԿ նախագահի 2011թ. օգոստոսի 16-ի «Ավելացված արժեքի հարկի հաշվարկի և ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի ձևերը, դրանց լրացման կարգերը հաստատելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010թ. հունիսի 14-ի N 1423-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2034-Ն հրամանում: Մասնավորապես, փոփոխություններ են կատարվել ավելացված արժեքի հարկի հաշվարկի ձևում ճշգրտող հարկային հաշիվների մասով:

By this order amendments have been made to the order of the Chairman of the SRC No. 2034-N of 16 August 2011 “On approval of the form of calculation of VAT and form of application for sett of and (or) refund of amounts with respect to the transactions taxed by zero rate of VAT and procedure on their completion and on repealing the order No.1423-N of the Chairman of the State Revenue Committee to the RA government dated 14 June 2010”. Particularly, the form of VAT report was amended related to adjusting tax invoices.

Հիշեցնենք, որ 2016թ. հուլիսի 1-ից սահմանվել է ճշգրտող հարկային հաշիվներ դուրս գրելու հնարավորություն: Միաժամանակ սահմանվել է, որ ԱԱՀ վճարողները պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքներն արտացոլել համապատասխան ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներում:

It should be reminded, that starting 1 July 2016 it was established a possibility for issuing adjusting tax invoices. At the same time, it has established that VAT payers shall reflect the results of transaction adjustment in VAT reports submitted for the reporting periods that include the date of issue of the appropriate adjusting invoice.

13. քԱնվանումը Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի, հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևերը հաստատելու, ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013թ. սեպտեմբերի 30-ի N 424-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին

13. Title On repealing the order No.424-N of 30 September 2013 of the Chairman of the State Revenue Committee to the RA government on approval of working procedure of complaints commission of the tax and customs authorities, form of an application-complaint to be submitted to the commission, form of a notification about the place and time of holding the session to be sent to the individual who has submitted the application-complaint

Փաստաթուղթ. Հրաման
Ամսաթիվը. 12 ապրիլի 2016թ.
Համարը. 18-Ն
Հրապարակում. ԳՏ No. 11, 20 մայիսի 2016թ.
Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: Order
Date: 12 April 2016
Number: 18-N
Publication: DJ No. 11, 20 May 2016
Effective: From the 10th day following the official publication

Համառոտ նկարագիրը.

Abstract:

Այս հրամանով սահմանվել է հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը, ինչպես նաև հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը:

By this order the form of an application-complaint to be submitted to the complaints commission of the tax and customs authorities, as well as the form of a notification about the place and time of holding the session to be sent to the individual who has submitted the application-complaint have been established.

Միաժամանակ, սահմանվել է հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի նոր աշխատակարգը և ուժը կորցրած է ճանաչվել նախկին աշխատակարգը՝ հաստատված ՊԵԿ նախագահի 2013թ. սեպտեմբերի 30-ի N 424-Ն հրամանով:

At the same time the new working procedure of complaint commission of the tax and customs authorities was approved and the previews procedure approved by the Order of SRC Chairman N424-N, dated 30.09.13 was repealed.

Contact us

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street,
Yerevan 0010, Armenia
Tel/Fax: +374(10) 566 762
E-mail: general@kpmg.co.am

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Վազգեն Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Երևան 0010, Հայաստան
Հեռ/ֆաքս: +374(10) 566 762
Էլ-փոստ : general@kpmg.co.am

The information contained herein is of a general nature and is not intended to address the circumstances of any particular individual or entity. Although we endeavour to provide accurate and timely information, there can be no guarantee that such information is accurate as of the date it is received or that it will continue to be accurate in the future. No one should act on such information without appropriate professional advice after a thorough examination of the particular situation.

©2016 KPMG Armenia cjsc, a company incorporated under the Laws of the Republic of Armenia, a member firm of the KPMG network of independent member firms affiliated with KPMG International Cooperative ("KPMG International"), a Swiss entity. All rights reserved.

The KPMG name and logo are registered trademarks or trademarks of KPMG International.

Մույնով ներկայացված տեղեկատվությունը ընդհանուր բնույթ է կրում և նպատակաուղղված չէ որևէ հատուկ անձի կամ ընկերությունում առկա հանգամանքներին: Մենք փորձում ենք ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել ճիշտ ժամանակին, այնուամենայնիվ, որևէ երաշխիք չի կարող լինել այն մասին, որ այդ տեղեկատվությունը ճշգրիտ կլինի դրա ստացման ամսաթվի դրությամբ, կամ որ այն կշարունակի ճշգրիտ լինել ապագայում: Ոչ ոք չպետք է այդ տեղեկատվության հիման վրա որևէ գործողություն կատարի՝ առանց համապատասխան մասնագիտական խորհրդատվություն ստանալու տվյալ մասնավոր իրադրության խորը ուսումնասիրությունից հետո:

© 2016 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG անվանումը և KPMG լոգոտիպը KPMG International կազմակերպության գրանցված ապրանքային նշաններն են:

